

ՂԵՎՈՆԴ ԱԼԻՇԱՆԻ ՆՈՐԱՀԱՅՏ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Հրապարակվող նամակները շնորհակալությամբ ստացել ենք Վիեննայի Մխիթարյան միաբանության արքայադուռի Վրդգորիս Մանյանից։ Նամակներից առաջինը գրված է 1856 թ., իսկ վերջինը՝ 1886 թ.։ Ալիշանի կյանքի երկրորդ շրջանը կազմող այս ժամանակահատվածը բնորոշ է նրանով, որ շափարեբրական քերթվածոց մեջ ախույան լուսնեցող վարդապետ* զնահատականին արժանանալուց հետո, նա շրջադարձ էր կատարել դեպի հայագիտությունը։ Սույն նամակները անգնահատելի ծառայություն են մատուցում Ալիշանի հայագիտական հետազոտությունների ստեղծման պատմությունը ըստ ամենայնի հստակելու համար։ Դրանք կարևոր տեղեկություններ են հաղորդում նրա հանրահայտ «Սիսուան և Լևոն մեծագործ» աշխատության ստեղծման մասին, բացահայտում են Ալիշանի «մխիթարյան» աշխատանքը, նրա անողոր խստապահանջությունը։

Նամակներից միառժամանակ հառնում է Ալիշան-ավագ ընկերը, իր խորհուրդներով ու վիթխարի գիտելիքներով կրտսերներին օգնող Ալիշան-խորհրդատուն, ներքին հարուստ նկարագրով Ալիշան-մարդը։

Մեր վերականգնումները վերցված են սուրանկյուն < > փակագծերի մեջ։

ՍՈՒՐԵՆ ՇՏԻԿՑԱՆ.

1

< ՀԱԿՈՐՈՍ ՊՈԶԱՃՅԱՆԻՆ >

Վենետիկ, Ա. Ղազար, 15 յուլ<իս>, 1856

Վերապատուեալ հայր.

Յաւեաց ինձ մեծապէս անակնկալ դարձ քո աստի և չյաջողել կրկին տեսութիւն մերոյ։ Արդ զայնր թերին լցցէ տեսութիւն եղբօր իմոյ հարազատի Հեթմոյ¹, բերողի թղթոյս. որում և ի կարելին ձեռնտու լինել զվեր<ապատուելի> հայրութիւնդ, կարծեմ վաղ քան զիս աղաչեալ միւսոյ եղբօր մերոյ. պ<արոն> Սերովբեի²։

Յանցանելն ընդ Վենետիկ անուանակցին իմոյ վ<սեմապատիւ> Հ<այր> Ղևոնդեայ Յովնանեան³, խնդրեաց ի ձեռն իմ զօրինակ պատմութեան Վարդանայ ի պէտս մատենադարանիդ, կամ փափաղողաց ոմանց եղբարց. առաքեմ զայն ի ձեռն հարազատիս, ինքնին բաղդատեալ ընդ ընտիր օրինակի, այլ թերութեանց գրչին ներել աղաչեմ, և զի ոչ ժամանեացի ես տալ զաղափարել մաքուր, աղաչեմ յանձին զայն դուք կսլջիք, և առեալ զհաւասարն, զպատճէն մեր անդրէն՝ երբ և կարէք, շնորհեսցիք մեզ։

* Մ. Ն ա լ բ ա ն դ յ ա ն, Երկերի լիակատար ժողովածու, հ. III, 1940, էջ 120։

Ակն ունիմ, թէ ապաքինեալ և կազդուրեալ է արդ վեր<ապատուելի>
Հայրութիւնդ, և լինել նոյնպէս մաղթեմ միջոյ, ոգշունելով զամենայն արդոյ
եղբայրութիւնդ և զխոնարհականն մատուցեալ առ հոգեւոր տէրդ, մնամ Քեդ

Խ<ոնարհ> ծ<առայ> և եղբայրակից
Հ<այր> Ղեւոնդ Մ. Ալիշանեան
Կ<րոնաւոր> Մի<իթարեան>

2

<ՀԱԿՈՐՈՍ ՊՈԶԱՃՅԱՆԻՆ>*

Վենետիկ, 9 ապրիլ, 1867

Մեծարդոյ տէր և վերապատուեալ հայր.

Բազում խնդութեամբ և շնորհակալութեամբ ընկալայ զշնորհեալդ ի պա-
տասխանի հարցմանս ինչ, վասն արշակեան դրամոյն: Ես ոչ պարապիմ
ի դրամաքննութիւն, այլ հարազատն իմ ըստ մարմնոյ՝ լուեալ զայնմանէ՝
որպէս կարծի նոյն ինքն ի վ<սեմապատիւ> հ<այր> Կղեմայ թղթոյն²,
հարցանէր զիս իբրև զմերձաւոր առ վեր<ապատուելի> հայրութիւնդ և առ
տեղի դրամոյն:

Հարցից և ես այլ ինչ. յառաջ քան զունգալական պատերազմունս՝ կար-
ծեալ թէ ի հայոց եկեղեցւոյ տեղւոյդ գտանէր գրչագիր մատեանք ինչ, գտա-
նիցի՞ն և արդ և որպիսի՞ք ինչ:

Զպատանին Կ. Ռոստոմ՝ նախուստ և ի գրութեանց նորին քաջ ծանուցեալ
թուիք³. այսինքն զախորժակս նորա ի բանասիրական դպրութիւնս, ի պատ-
մութիւն և ի նմանիս. ի շափաբանականս ձիրս նորա բերումն և առ բժշկու-
թիւն չցուցանէ ախորժ և յարմարութիւն. բայց ասէ իրաւագիտութիւն պարա-
պել կամ զայլն ընտրել արուեստ. յոր մարթի արդեօք և յաջողել վասն հան-
դարտ և անզբաղասէր բարուցն: Զեն շատ ժամանակք, զի սկսեալ է զուսումնդ,
ընդ նմին և զբնագիտութիւն և ի յառաջել զսակաւ մի ևս ժամանակի, մարթ է
գուշակել ստուգագոյնս ինչ: Յամահետ պարապի և լուսումն գերմանական
բարբառոյ:

Ողջունիւ հին ընկերակցացս, մնամ մեծարգոյ Հայրութեանդ

ն<ուստ> եղբայրակից
Հ<այր> Ղեւոնդ Մ. Ալիշանեան
Ո<րդեղիր> Կ<ուսին>⁴

* Նամակի վրա կա արբահոր հետեւյալ նշումը. «Հ<այր> Ղեւոնդ վ<արդապետ> Մ<ար-
գարեան> Ալիշան ի Վենետիկ. ընկալայ ի 14-րդ ապրիլի 1867. ի 25 մայ<իսի> ետու պա-
տասխանի ի պատեհ ժամու միւս անգամ գրել: Ո՛չ ձեռագիր և ո՛չ գրեան գոն ի եկեղ<եցին>
հայ<ոց>, զամ<ենայն> հ<այր> Աթանաս 1849 թ. ընտրանօք ի Կ. Պօլիս յղեալ իցէ:

Ի ճՅ նովեմբ<երի> 1867 գրեցի, թէ գերման ուսուցիչ եթէ դիւրագնոյ—ծանուցէ որչափ
ամուրց յամիս և մարտ վերջի՞ն ամ նորառ:

3

<ՀԱՅՈՐՈՍ ՊՈԶԱՃՅԱՆԻՆ>

Վենետիկ, 21 հունիս, 1867

Մեծարգոյ հայր և սիրելի եղբայր.

Մինչդեռ հանդերձէի գրել զպատասխանի հարցմանցդ ի Դրիեսթէ¹, եհասն ալ խնդիր ի ձեռն վ<սեմապատիւ> հ<այր> Մանուկի մերոյ², վասն որոյ և յանազանեաց գիրս անոնրս ինձ ևս ի խնդիր վերջնոյն, այն է վասն եպիսկոպոսարանաց, վանականաց և ընկալցիս զայդ փոքր ի շատէ ի ձեռանէ նորին հօր:

Զունենալով առ իւր ի ժամուս ղԿաղանկատուցին ոչ կարացի քննել ղՍիւնականին խնդիր. սակայն եթէ նա ինքն իցէ Յովհանն կաթողիկոս յունական մասին, անմարթ է նմա գործ ունել ընդ Սահակայ կաթողիկոսի, քանզի ընդ մահ ևրկոցուն նոցա 94 ամք են միջոց³:

Սրարեմ զհատուած բանի յունական օրինադրոյ նշանակեալդ:

Ընկալայ ի վ<սեմապատիւ> հ<այր> Ղեւոնդեայ Յովնանեան զպատասխանի և զհաշակս խնդրելոցս ինչ գրուածոց և զՅիշատակարան Դատաստանադրոցն, շնորհակալութեամբ⁴:

Կէս յողջունելոցդ ալդր ի Հռովմէ ալժմիկ և ալլք անտուստ ողջունին. ընդ որս և ես խոնարհ համբուրիւ աշոյ Գերապատիւ Աբբահօրդ, մնամ

Վերապատուելի հայրութեանդ
ն<ուստ> եղբայրակից, հ<այր>
Ղեւոնդ Մ. Ալիշանեան

Յառաջնում թղթին միայն Մամիկոնեան կոչի Վարդ, յերկրորդում և եթ Մարդպան:

4

<ՀԱՅՈՐՈՍ ՊՈԶԱՃՅԱՆԻՆ>*

Վենետիկ, 2 դեկտեմբեր, 1867

Մեծարգոյ հայր.

Ծօցարութիւն պատանւոյն Կոմիտասայ նոյնք երեւին¹. միտեալ թուի յաւէտ ի քաղաքագիտականն և ամենեկին անընդունակ կարծեմ բժշկական գիտութեան, առ որ բազում աշալրչութիւն պահանջի ընդ իս, որ պակասէ ի դա:

* Նամակի վրա կա Աբբահօր հետեւյալ նշումը. «Հ<այր> Ղեւոնդ վ<արդապետ> Ալիշան ի Վենետիկ. ընկ<ալ> ի 15 դեկտեմբերի> 1867 թ. ի 10 յունուարի 1868 թ. գրեցի, թէ վասն 4—5 ամաց վարժապետի և գրոց հղեսցեն դրամ 15 ֆրանք յամս. կամ ի Թր<իեսթէ> կամ աստի, յետ եւթնեկաց ինչ. ուստի սկսեցի վաղագոյնս ուսանել զգերմ<աներեն> լեզուս: 89 Ապր<իլի> գրեցի ծանուցանել ինձ, թէ որչափ ֆրանք լինիցին ցվերը ուսումնական տարույս վասն Կոմիտ<ասայ> ուսման գերման լեզուի, ղի ձեռն հ<այր> Սամ<ուելի> յղեցից ի մի նուագ զմնացեալն»:

Ժամանակ ուսմանց վարժարանիս՝ սովորականն է վեց ամ, բայց զի ոչ ամենայն աշակերտք ի միասին գան, ոմն շատ և ոմն սակաւ մնայ. և բազումք լընկերաց դորա ի շորս ամս վճարելոց են զընթացս իւրեանց:

Յոյն և լատին աստ ոչ ուսուցանեմք. մարթ էր դմա առանձինն պարապել, այլ զի զստոյզն խոստովանեցայց մեք շտամանեմք առ սղուծին ժամանակի վարժել զդա ի լատին լեզու և արտաքուստ անվարձ վարժապետ առ այժմս ոչ գիտեմ: Իսկ վասն գերմանական լեզուի, եթէ գոնեայ 15 ֆրանգ կարիցեն սատարել իւրքն ամսոյ ամսոյ, մարթացուց ի ձեռն վարժապետին տալ յառաջ վարել զուսումն: Աւստրիական թղթադրամ ամենեկին շերեի աստ այժմիկ, բայց կորստեամբ արժէից հաւատամ թէ ընդունելի լիցի սեղանաւորաց:

Ի սեպտեմբերի մերձեցեալ տարւոյ, լիցի աստ աւարտ ուսմանց պատանուդ, որպէս համարիմք արդ:

Մատուցի զողջոյնքդ առ վ<սեմապատիւ> հ<այր> Աբրահամ² և նա սիրով ողջունէ զմեծարգոյ Հայրուծինդ, որում մնամ

ն<ուսատ> եղբայրակից
Հ<այր> Ղեռնդ Մ. Ալիշաքեան
Ո<րդեգիր> Կ<ուսին>³

5

<ՀԱԿՈՐՈՍ ՊՈԶԱՅԱՆԻՆ>

վենետիկ, Ս. Ղազար, 4 փետր<ուար>, 1874

Մեծարգոյ Տէր.

Զոր դուք պարտս կուէք Ձեզ՝ մեք, ընկերակիցք իմ հարք և ես, ազնիւ մտաց և սրտի նուէր. ծանեաք, զյօժարութիւնդ՝ լընձեռնել մեզ զնորսիսեան կանոնս, ի լրումն հաւաքմանս մերոյ. վասն որոյ և առաւել քան ընդ տուրսդ՝ հաճիք ըստ յօժարութիւնդ: Եւ զի յետ հրատարակման պատմութեան Շնորհալույն և Պարագային՝ նոր ինչ այլուստ ոչ ընկալաք, շնորհակալութեամբ ընկալցուք զոր խոստանալք ընդօրինակել և առաքել մեզ, մանաւանդ եթե արդարեւ նոր ինչ կանոնք իցեն, որպէս յուսամ, և ոչ բանք վասն ազգականութեան աստիճանաց, զորոց գրեալ եմ (յէջ 266—268), և որոյ սկիզբն է Վէն-թեռնելով իմ զխրատ աշտիճանաց ազգականութեան» և այլն, որ և արդարեւ խրատ իմն է և ոչ կանոն: Իսկ զոր յետ այնր նշանակէք, «կանոնք զգուշաւոր քահանայից», գտանի և առ մեզ. վասն որոյ զառաջինն միայն հաճեսցիք տալ ընդօրինակել, եթէ, որպէս ասացի, չիցէ խրատն այն, կամ մասն լընդհանրական թղթոցն:

Հաճեսցիք տալ ինձ ծանօթս և զՅակովբայ Ամասիացոյ և զգրուածոյ նորայ, զի ցարդ անգէտ էի զնմանէ:

Ընդ սոսին, եթէ հաճիք ծանուցանել, թէ քանիք և որպիսիք այլ ձեռագիր մատեանք իցեն առ Ձեզ, շնորհ մի ևս առնեք մեզ, մանաւանդ եթէ և շնորհեսցիք գաղափարելով զյիշատակարանս գրոյն, և ես, որպէս այժմս գրովս, շանացայց և ապա որպէս կարեմս լինել Ձեզ շնորհակալ և երախտագէտ, մաղթելով Քեզ և հօտիդ բարգաւաճանս յանդորրու.

ն<ուսատ> ծ<առայ>
Հ<այր> Ղեռնդ Մ. Ալիշաքեան
Ո<րդեգիր> Կ<ուսին>²

<ՀԱԿՈՐՈՍ ՊՈԶԱՃՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս. Ղազար, 29 մարտ, 1883

Մեծարգոյ և սիրելի հայր.

Մերունիք առաւել կարեկիցք են միմեանց, վասն որոյ համարձակիմ առ յառաջագէմդ իմ դիմել և խնդրել նախ, զի թէ այդր կամ մօտ իցէ Քյուրքճեան¹ ծանօթ լուսադրողն՝ յանձնեսցիք զծրարեալս ի սմին թուղթ. ապա թէ մեկնեալ արդի և անծանօթացեալ է՝ յետս դարձուցիք:

Երկրորդ, բազում ամօք յառաջ խնդրեալ էի զպատճէն Յիշատակարանաց հայերէն ձեռագրաց մատենադարանիդ, ի պէտս աշխարհագրական վաստակոցս², և հաճութեամբ առաքեցաւ և շնորհակալ եղէ և եմ. արդ խնդրեմ, եթէ յետ այնր յաւելեալ իցէն առ Ձեզ ձեռագիրք և դայնոցիկ յիշատակարանս. վերջին թիւ նախ առաքելոցդ էր 145 (Պարզատօմար): Զայսմանէ ժանուցի՝ ումեք ի ձեռն ալլում, ալլ նա թողեալ է զքննութիւնն ալլն ժամանակի:

Դարձեալ բազում ամօք յառաջ դրեալ և խնդրեալ էի ինչ ի վ<սեմապատիւ> Հ<այր> Սիմոնէ³ և շնկալայ պատասխանի. կամէի միայն գիտել, թէ ընկալա՞ւ արդեօք զթուղթ իմ:

Ողջունելով զվ<սեմապատիւ> եղբարսդ և առանձինն զանուանակիցն՝ իմ⁴ և զՁեր հարազատ, մնամ մեծարգոյ ձօրդ

ն<ուաստ> եղբայրակից,
Հ<այր> Ղևոնդ Մ. Ալիշանեան
Ո<րդեգիր> Կ<ուսին>⁵

<ՎԱՐԴԱՆ ՀՍՏԿԱՐՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս. Ղազար, 13 նոյեմբ<եր>, 1884

Մեծարգոյ և սիրելի եղբայր.

Թուի ինձ թէ զատ մենացեալ ի սենեկիդ ի նրբագոյնս զբաղիս անզբաղօրէն. ներեա՞ զի փոքր մի շփոթեցից դժեղ՝ յանկարծուց երևմամբս:

Բայց նախ խնդրեմ թարգման լինել մեծարանաց և խնդակցութեան իմ և եղբայրակցացս, և առանձինն վ<սեմապատիւ> Հ<այր> Գարեգնի մերոյ¹, առ Արհիպատիւ նորընծայ Աբբահայրդ և արքեպիսկոպոս, խոնարհ ողջունիւ և համբուրիւ աջոյն, և առ համօրէն միաբան եղբարքդ²:

Լուայ, զի վ<սեմապատիւ> Հ<այր> Համազասպ վարդապետ Ձեր³ առաքեալ է ի հին տպագիր մատեան ինչ հայերեն, հանդերձ թուականաւ և խնդրեմ ծանուցանել ինձ կամ ընդօրինակել զթուականն և զյիշատակարան. զի են և առ մեզ դրժոյկք ինչ հնատիպք, ալլ անթուական:

Դարձեալ խնդրեմ կշռել զմեծագոյն արծաթի դրամ Ռուբինեան, որ գտցի՞ր ի թանգարանիդ և նշանակել քանի՞ կրամ իցէ և ո՞յր թագաւորի դրամ:

Միւս եւս խնդիր. ամօք յառաջ բնակէր ի քաղաքիդ հռչակաւոր երկրաբանն Ապիխ⁴. իցէ՞ տակաւին այդր, թէ փոխեալ է այլուր, կամ յայլ աշխարհ: Մաղթանօք յերկար քաղողըութեան, մնամ

ն<ուստ> եղբայրակից
Հ<այր> Ղեւոնդ Մ. Ալիշան,
Ո<րդեգիր> Կ<ուսին>⁵

8

<ՎԱՐԴԱՆ ԸՍՏԿԱՐՅԱՆԻՆ>

Վենետիկ, Ս. Ղազար, 1 դեկտեմբեր, 1884

Մեծարգոյ հայր և սիրելի եղբայր.

Ընկալեալ զշնորհեալդ ի 28 թիւ անցելոյն, եթէ փութով ևս գրեմ, ոչ առ ժրութեան է, այլ առ ազահութեան, կամ առ ի չկորուսանել զպատեհն. այն է գմերձաւորութիւն վ<սեմապատիւ> Հ<այր> Սիմոնի¹, զոր ծանուցանէք: Երկեմեալ յառաջ (ի սեպտեմբերի 1882 ամի) գրեցի և խնդրեցի ինչ ի նմանէ. և յորժամ հերոն լուսահոգի նախորդ Աբբահայրդ յայց ել մեզ², եհարց՝ եթէ ընկալա՞ր զպատասխանի վ<սեմապատիւ> Հ<այր> Սիմոնէ. ասացի՝ ոչ. գնոյն ասէմ և այժմ: Թերևս իմ թուղթ առ նա կամ նորայն առ իս չէ հասեալ: Արդ խնդիր իմ այս էր. համարէի թէ գրուածք հանգուցեալ Սիպիլեանին³ առ նմա իցեն, յորս և ստորագրութիւն Չանտըր Գալեսի բերդի Կիլիկիոյ, զորոյ օրինակ ինքնին առաքեաց ինձ ուղևորն. այլ ի գրուածին յիշեր, զի հանեալ է և զձե բերդին. ահա այս է իմ խնդիրն. եթէ գուցե առ վ<սեմապատիւ> Հ<այր> Սիմոնի պատկեր կամ տեղագիծ բերդին այնորիկ, թէպէտև անազան, այլ դարձեալ խնդրեմ⁴: Յորժամ հաճեսցի ծանուցանել ինձ զլիցոյ դրամոցն, յաւելցէ և զայս. իսկ այժմիկ ողջամբ մնայցէ, որպէս և սէրդ ներելով ծերոյ անուանակցիդ և եղբայրակցի

Հ<այր> Ղեւոնդեայ Մ. Ալիշան.

Յաւելից առ ստուգութիւն և ոչ առ փութացումն. զի հին տպագիրն, զորմէ գրեցի նախընթացիւ՝ յայսմ իսկ ամի առաքեալ է ի վ<սեմապատիւ> Հ<այր> Համազասպայ⁵, որպէս լուայ. այլ թերևս մնացեալ է ի Կ. Պօլիս, առ վ<սեմապատիւ> Հ<այրն> Եղիշեայ⁶:

9

<ՎԱՐԴԱՆ ԸՍՏԿԱՐՅԱՆԻՆ>*

Վենետիկ, Ս. Ղազար, 10 յանուար, 1885

Մեծարգոյ հայր.

Ոչ բազում աւուրբք յառաջ ծանոյց ինձ սիրելի անուանակիցն իմ, վ<սեմապատիւ> Հ<այր> Յովնանեան¹, զի երկու ժամուց զկնի մեկնելոյ Ձեր ի Վիեննայէ՝ հասեալ է առ նա թուղթ իմ և հարցուած ինչ, զոր կամեցեալ է Ձեր

* Նամակի վրա կա արբահոր հետեյալ՝ մականորութիւնը. «Հ<այր> Ղեւոնդ վ<արդապետ> Ալիշան ի Վենետիկ. ընկալայ յ12 յանուարի 1885, յ8 փետրեարի 1885 գրեցի պատասխանի, յգելով 1 ֆրանկ» վասն 2 օրացուցայ 1885-ի»:

տեղեկանալ յինէն. և զայն ևս. թէ ուր ուղղեալ էր իմ զառաջին թուղթն իմ առ Ձեզ: Նշանակեալ եմ զօրն և զամն, որպէս և գիտէք, իսկ զճանապարհն՝ որպէս ինչ յիշեմ, ընդ Վիեննա ընտրէցի. այսինքն, կարծելով թէ ի մայրաքաղաքի անդ իցէք, անդր ուղղեցի զգիր իմ: Արդ թէպէտև էանց պատէհն, այլ զի տակաւին մարթ է ինձ օգտիլ, այս էր խնդիր իմ. համարէի թէ առ Ձեզ իցեն թուղթք և գրուածք հանգուցեալ Սիպիլեանի² և հարցանէի, թէ գացի ի նոսին տեղագիծ կամ տեսարան Չաւաք Գալեպի բերդի, զորոյ արձանագիր ընդօրինակեալ էր նորա ի Կիլիկիա և հրատարակեալ, և ասէր ունել և զպատկեր բերդին. արդ զայս պատկեր ցանկալի ունել, զի հրատարակեմ և ես տեղեկութիւն դրբորդեն, որ կոչէր Պապառօն ի հնումն և արդէն տպագրեալ է այն մասն տեղագրութեան, այլ չև ևս է աւարտեալ տպագրութիւն բովանդակ գործոյն³: Այս էր խնդիր իմ և հարցումն:

Երկրորդ և նոր հարցումն էր վասն ծանրագոյն կամ մեծագոյն արծաթի դրամոյ Ռուբինեանց, և ծանուցեալ էիք լինել 5, 6/10 կրամ. եթէ գտցին մեծագոյնք ևս՝ հաճիք ծանուցանել, և ես առանձինն մտերմութեամբ ողջագուրելով զմեծարգոյ հայրդ, մնամ

ն<ուստ> ծ<առայ> և եղբայրակից
չ<այր> Ղեւոնդ Մ. Անիշան,
Ո<րդեգիր> Կ<ուսին>⁴

10

<ՍԻՄՈՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ>*

Վենետիկ, Ս. Ղազար, 12 փերր<ուար>, 1885

Մեծարգոյ տէր, վ<սեմապատիւ> չ<այր> Սիմոն վարդապետ.

Բազում հաճութեամբ և շնորհակալութեամբ ընթերցայ և ընկալայ զմէն մի ի դրելոցդ յ8 մասոյս, ևս առաւել զմաղթանսդ յաւուր յիշատակի սրբոց Ղեւոնդեանց, որոց բարեխօսութիւն խառնեալ ընդ սէր կէանս տօնեցելոց Ս. Վարդանանց, յաւելցին և զշնորհս և զամս մեծարգոյ Հօրդ:

Ոչ ունիմ զոր և է պատկեր բերդին Պապառօնի¹ և Դեսիէ² չէ հրատարակեալ այնպիսի ինչ, բայց զմիոյ և եթ բերդի, յօրագրի ուրեմն. վասն որոյ ցանկալի է ինձ ունել (թէ և անագան) զպատկերս դորին, եթէ իցեն այնպիսիք, զորս մարթ իցէ տալ վիմագրել կամ գծագրել ի ցինկ և մուծից ի Յաւելուած գրոցս տեղագրութեան, որոյ մերձ է աւարտ տպագրութեան³:

Իսկ զերկոցուն յիշեցելոց արձանացդ՝ որ ի թիւս ՈՂ և ՉԵ, ինքնին իսկ հանգուցեալ չ<այր> Սիպիլեանն առաքեալ էր ինձ զպատճէն, և արդեն յեղեալ և տպագրեալ եմ ի մատենիս, յիշելով զբազմաշխատ օրինակողն⁴. յայտ է թէ յիշեսցի և յընծայման պատկերացն, եթէ յաջողեսցին գալ ի լոյս՝ յիմումս մատենի: Եթէ գուցեն այլ ինչ արձանագրութիւնք Կիլիկեան կողմանց՝ հաճոյ են ինձ, բաց ի Տարսոնեանց, զի բազում անգամ ընդօրինակեալ են արձանագիրք, որք յեկեղեցիս այնր քաղաքի և հրատարակեալք:

* Նամակի վրա կա Անտոնյանի հետևյալ մակագրութիւնը. «Չ<այր> Ղեւոնդ վ<արդապետ> Մ<արգարի> Անիշան ի Վենետիկ. Ընկալայ ի 14 փերր<ուարի> 1885. Եւ 19 փերր<ուարի> գրեցի պատասխանի և յղեցի հինգ (5) ուրուագիծս Չանտըր Գալեպի (Պապառօնի)»:

Աւագիկ տիպք կամ պատկերք ոսկի դրամոց Լեւոնի, որ գտանի առ մեզ. դատեսցէ գիտակդ և հմուտ այսպիսեաց. ինձ թուեցաւ թէ շիցէ սա՛ Մեծին կամ Առաջնոյ թագաւորին Լեւոնի, այլ թողին նորա (որդւոյ Ա. Հեթմոյ), փափագեա՞լ լսել զՁեր դատաստան: Ես, որպէս գուշակէ Վեր<ապատուելի> Հայրդ, ոչ պարապիմ ի գիտութիւն դրամոց, այլ ըստ հարկի տեղագրութեան Կիլիկիոյ և մանաւանդ բաժտան նաւահանգստի նորին Այասոյ⁵, ստիպեցայ ստուգել զչափ և զարժէս դրամոց Հայոց և տալ ծանօթութիւն ինչ, ընծաւելով և զտիպս դրամոց ոմանց. զորոց դատեսցէ ի ժամանակին հմուտդ և սիրարկու այսպիսեաց: Մոռացայ յարել ի վերոգրելիս, զի կշիռ ոսկւոյս մերոյ գոգշիւ հաւասար շորս կրամէ, այլ կամեմ տալ փորձել զայն, և ի լինել առթի՛ միւս անգամ ծանուցանել:

Շլումբերկեր, անշուշտ ծանօթ Ձեզ⁶, հրատարակեալ է զպատկեր ոսկե դրամոյ միոյ Լեւոնի (որդւոյ Հեթմոյ), որոյ պատկեր հակակողմանն է առիւծ մի ի զնացս և կրկնաթև խաչ ի թիկանց. կշիռն է 4:80 կրամ, որպէս ծանուցանէ ինքն: Նոյն ծանուցանէ, զի տեսեալ է առ ումեք կամ ընկալեալ զդրոշմ լատինադիր դրամոյ Մեծին Լեւոնի՝ յԱնտիոք հատելոյ. ունիցի և վեր<ապատուելի> հայրդ այսպիսի դրամ ցանկալի:

Վասն օրացուցից տարւոյս, շէր պարտ առաքել զՔեոքինդ և ինձ թերեւս պարտ էր առաքել աւելի ևս օրինակս, եթէ շէր սպառեալ և առ մեզ. առաքեմ զոր գտի և մաղթեմ ողջ լինել:

Մեծարգոյ Հօրդ

Խ<ոնարհ> Ժ<առայ> և եղբայրակից
Հ<այր> Ղեւոնդ Մ. Ալիշան,
Ո<րդեգիր> Կ<ուսին>?

11

<ՎԱՐԴԱՆ ԸՍՏԿԱՐՑԱՆԻՆ>

Վենետիկ, Ս. Ղազար, 28 յուն<ուար>, 1886

Մեծարգոյ հայր և սիրելի եղբայր.

Տակաւին կայ ի վերայ գրասեղանոյս բան ինչ մխիթարական, զոր պատշաստէի յաւուրս յայսոսիկ առ մի ոմն յաշակերտացս, որ ի հերոն, ի հեռաւոր գաւառէ կին ածեալ և շնորհաւորէալ առ յինէն, հազիւ բոլորեալ տարւոյն՝ այրիացաւ: Նմանօրինակ իմն հնչեաց յիս գոյժ արկածիդ. և արդարեւ որպէս զմի ի բարեկամացն Յովբայ, մատչիմ առ քեզ և առ քոյինս, ոչ հանդերձիւք այլ սրտիւ պատառելով. զի անակնկալ և դառնակսկիծ հարուածն՝ որ զՁեզ ի խոր խոցեաց, ոչ անխոց և անսասան եթող և զեղբայրակիցքս: Ոչ կարեմ բժոտ բքոքս նշմարել զխորհուրդս խոնարհեցուցիչ և երկրպագելի կամացն աստուծոյ, այլ հաւատամ, զի ըստ ծանոթութեան խրատուն պատրաստեալ է և մխիթարութիւն փորձեցելոցդ և վշտացելոց, այլ մինչև ի ճաշակ յամեցեալ և անծանօթ մխիթարութեան. մնան ապաքէն կիրք և հոգք անհամբոյրք փոքրոգի բնութեանս, զորս՝ նորին հարկանողին և բժշկողի ամենարուեստ Ձեռաց, դիւրել և թեթեւեղեղ Ձերովդ առաքինաջան արիութեամբ և միաբանական սիրով յուսամ և ժտիմ յամենայն սրտէ, որպէս և եղբարքս իմ զնոյն մաղթեն ցաւակցաբար՝ արգո Միաբանութեանդ՝:

Թէպէտև անցեալ է պատեհ և այսր խնդրոյ իմոյ, իսկ զոր Դուքդ հարցանէք զկշռոյ ոսկի դրամոյ, այս է, Լեւոնին 4 կրամ, Կոստանդեայն 3,60. աւադիկ և պատկէր յետնոյս: Գուցե՞ և առ Ձեզ ոսկի դրամք Ռուբինեանք: Առաքեալ և զպատկեր դրամոյ միոյ Լեւոնի, որոյ նման կարծեմ թէ գացի առ Ձեզ, և հիթէ լաւագոյն քան զսորայս իցէն տիպքն՝ խնդրէ ի տեսանել (ծրագրել): Հարազատն իմ ընթեռնու Լեւոն ժառանգ Ստեփանէի. իցէ՞ այդպէս, իթէ ի հրդեհէ, որ 30 և աւելի ամօք յառաջ զերծեալ իցեն: Ձեռագիր հայերէն մատենանք ինչ ի նայսոյ (եթէ գտցին) խնդրէի զյիշատակարանսն:

Բարեբեղուն մաղթելով զսկսեալս նոր աւ՝ մնամ Արգո հօրդ

Խ<ոնարհ> եղբայրակից
Հ<այր> Ղեւոնդ Մ. Ալիշան,
Ո<րդեգիր> Կ<ուսին>³

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1

1. Դժվար է ասել, թե ով է Հեթումը, որին Ալիշանն անվանում է իր հարազատ եղբայրը: Մեզ հասնի և ոչ մի աղբյուր Ալիշանի համար նրա կրտսեր եղբայր Սերովբե Ալիշանյանից բացի (տե՛ս ստորև) ուրիշ հարազատ չի հիշատակում: 1880 թ. «Մասիսը» (№ 2668) հրատարակել է հետևյալ ուշագրավ լուրը. «Անգղիական դեսպանատան թարգման, հայագրի պ<արոն> Ալիշան, նախընթաց օրը Մեծ կղզվույն մեջ հանկարծական մահվամբ մեռավ: Հանգուցյալն, որ Հայր Ղևոնդ Ալիշանին եղբայրն էր, գրեթե քառորդ դար է լինել անգղիական դեսպանատան ծառայությանը մեջ կգտնվեր, իբրև թարգման: Որքանո՞վ է ճշմարտացի այս տեղեկությունը կամ անգլիական դեսպանատան թարգմանիչ Ալիշանը արդյո՞ք նամակում հիշատակված Հեթումն է, դժվար է ասել:

2. Սերովբե Ալիշանյան (1822—1903) — Ղևոնդ Ալիշանի կրտսեր եղբայրը, մասնագիտությամբ դրամագետ: Ավագ եղբոր հետ նա 1832 թ. մեկնում է Վենետիկ ուսումնառության և 1837 թ. վերադառնում Պոլիս: 1845 թ. Սերովբեն մեկնում է Ամերիկա, բնակություն հաստատում նախ՝ Վաշինգտոնում, ապա՝ Բոստոնում, անդամագրվում է երիտասարդական «Բրաունինգ կլոբին» («Browning clubs») և գործուն մասնակցություն ունենում հայկական համայնքի կյանքին: 1847 թ. Սերովբե Ալիշանյանը վերադառնում է Պոլիս արդեն ճանաչված դրամագետ, այդ բնույթի հոգևածներով հանդես է գալիս ժամանակի պարբերականներում («Սերովբե Պետրոսյան», «Ս. Ալիշան» ստորագրություններով): Սերովբեն հայկական դրամագիտության հետ առնչվող հարցերում մշտապես օգնել և խորհուրդներ է տվել ավագ եղբորը: Ալիշանյան եղբայրները կապված են եղել միմյանց հետ և մշտապես նամակագրական կապ են ունեցել:

3. Ղևոնդ Հովնանյան (1817—1897) — Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, պատճաբան-բանասեր, թարգմանիչ (ֆրանսերենից, լատիներենից, թուրքերենից՝ հայերեն): Ուշագրավ են Կոռնելիոս Նեպոսի «Վարք զօրավարաց անուանեաց» գործի՝ բնագրից կատարած նրա դրամար թարգմանությունը (Վիեննա, 1842), «Փերականություն զաղղիներն լեզվի» եռահատոր աշխատությունը (Վիեննա, 1843—1844), «Գիտություն տերություն կամ վիճակագրություն» ուսումնասիրությունը (Վիեննա, 1847), «Պատմություն քաղաքականության եվրոպական տերությունաց» քառահատոր աշխատությունը (Վիեննա, 1856—1860) և այլն:

2

1. Ակնարկում է եղբորը՝ դրամագետ Սերովբե Ալիշանյանին (տե՛ս № 1 նամակի 2-րդ ծանոթագրությունը):

2. Կղեմես Սիպիլյան (1824—1878) — Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, դրամագետ, արձակագիր, թարգմանիչ (Ֆրանսերենից՝ հայերեն)։ Արժեքավոր է նրա «Դասավորություն Ռուբինյան դրամոս» (Վիեննա, 1892) աշխատությունը, որտեղ առաջին անգամ գիտականորեն բնութագրվում ու դասակարգվում են Ռուբինյան հարստության թագավորների առաջ հայտնի բոլոր դրամները։ Ալիշանը Սիպիլյանի հետ ծանոթացել էր 1852 թ. Վիեննայում եղած ժամանակ, սակայն նրանց միջև եղած նամակագրության փաստը բացահայտվում է այս նամակով։

3. Կոմիտաս Ռոստոմը (Ռոստոմյան ?) արբանյակ հանձնարարությամբ եկել էր Վենետիկ՝ ընդունվելու Ռափայելյան վարժարան։ Ալիշանն այդ տարիներին (1866—1872) Ռափայելյան վարժարանի տեսուչն էր։

4. Հիմնադրվով Միաբանությունը, Մխիթար Սեբաստացին այն պաշտոնապես կոչեց «Որդեգիր Կուսին, վարդապետք ապաշխարութեան» (ՈԿՎԱ)։ Ըստ այդմ, միաբանության յուրաքանչյուր անդամ, իր անունից ու կոչումից հետո, պետք է ավելացներ ՈԿՎԱ կամ՝ ՈԿ, Միաբանության անդամ լինելը հավաստելու համար, ինչ և հաճախ, իր նամակների վերջում, արել է Ալիշանը։ Մխիթար Սեբաստացու մահից հետո միայն Միաբանությունը կոչվեց «Մխիթարյան»։

3

1. Որքան ժամանակով էր Ալիշանն ուղևորվել Տրիեստ և ինչու՞ անհայտ է։ Մեզ ծանոթ աղբյուրներն Ալիշանի այս ուղևորության մասին ոչինչ չեն նշում։

2. Մանվել Քաշունի (1823—1903) — Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, բանասեր, բնագետ։ Նրա «Երկրագործություն» (Վենետիկ, 1899), «Շերամաբանություն» (Վենետիկ, 1895), «Արվեստաբանություն» (Վենետիկ, 1875, Բ. տիպ՝ 1897) աշխատությունները երկար ժամանակ օժանդակ ձեռնարկ են հանդիսացել։ Մանվել Քաշունուն գիտական փառք ու ճանաչում բերեց նրա «Բառագիրք արվեստից և գիտությանց» երկհատոր աշխատությունը (Վենետիկ, 1891 և 1893)։ Հիշյալ ժամանակաշրջանում Քաշունին, Ալիշանի տեսչության ներքո, դասավանդում էր Ռափայելյան վարժարանում։

3. Տե՛ս Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 220։

4. Ղևոնդ Հովնանյանի մասին տե՛ս № 1 նամակի 3-րդ ծանոթագրությունը։ Դեռ 1850-ական թվականներից Ալիշանը ձեռնամուխ էր եղել Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» քննական բնագրի հրատարակությանը։ Այդ կապակցությամբ նա հանդես է եկել արժեքավոր հոդվածներով («Մարաշու վանքին դատաստանագրքը», «Բազմավէպ», 1848, № 3, «Ծաղաղա իսկական և նախազաղափար օրինակի գրոցն Դատաստանի Մխիթարայ Գոշի», «Բազմավէպ», 1848, № 8, «Զեռնագիր Մխիթարայ Գոշի», «Բազմավէպ», № 10 և այլն)։ Մեզ անհայտ պատճառներով Ալիշանի այդ ձեռնարկումը չի բավականացավ։

4

1. Կոմիտաս Ռոստոմի մասին տե՛ս № 2 նամակի 3-րդ ծանոթագրությունը։

2. Աբրահամ Զարյան (1819—1892) — Վենետիկի Մխիթարյան միաբանության անդամ, պատմաբան-բանասեր, թարգմանիչ (հունարենից, լատիներենից, ֆրանսերենից, գերմաներենից՝ հայերեն), մանկավարժ, նրա բազմաթիվ ինքնուրույն ու թարգմանական աշխատություններից հիշատակության արժանի են՝ «Սկզբունք պատմության ազգաց, Քրիստոսի թվականին ինչվան մեր օրերը» (Վենետիկ, 1846), «Պատմություն Գաղղիացիաց» (Վենետիկ, 1849, երկու հատոր) և այլ ուսումնասիրությունները։ Նշանակալից են նաև Տակիտոսի «Ագրիկոլա» և «Տրամախոսություն հոնորաց» (Վենետիկ, 1871), Գայուս Սալուստիոսի «Պատմություն Կատիլինյան դավաճանության» (Վենետիկ, 1856), Նապոլեոն III կայսեր հեղինակած՝ «Պատմություն Հուլիոսի Կեսարու» (Վենետիկ, 1867) գործերի՝ բնագրերից կատարած թարգմանությունները։ Ալիշանի՝ Ռափայելյան վարժարանում տեսչության տարիներին, Աբրահամ Զարյանը դասավանդում էր այնտեղ։

3. Տե՛ս № 2 նամակի 4-րդ ծանոթագրությունը։

5

1. Նկատի ունի «Շնորհալի և պարագա յուր» աշխատությունը (Վենետիկ, 1873)։ Ցանկանալով ճշտություն մտցնել հայկական ծագումնաբանական համակարգում, Շնորհալին «Աստիճանք ազգականութեան» խորագրի տակ ստեղծում է հատուկ աղյուսակ՝ ընտանիքի անդամներին

համապատասխան անվանումներով (արական կողմից՝ հայր, պապ, հորն պապ, պապուն պապ, երկու պապ և այլն, իգական կողմից՝ մայր, մամ, մորն մամ, մամուն մամ և այլն), որը երկար ժամանակ կիրառվում էր ամուսնական հարաբերությունների հարցում ճշգրտություն մտցնելու համար: Շնորհալու այդ նորամուծությունն ըստ ամենայնի քննել է Ալիշանն իր վերոհիշյալ աշխատության մեջ:

2. Տե՛ս № 2 նամակի 4-րդ ծանոթագրությունը:

6

1. Քյուրքճյան Հովհաննես—Մշակութային գործիչ, ունի գեղարվեստական որոշ գործեր, սակայն առավել հայտնի էր որպես լուսանկարիչ: Նրա հրատարակած «Հայաստան. ժողովածու ավերակը Անվո (Մայրաքաղաք Բագրատունյաց)» ատլասը (Երևան, 1884) ուշագրավ է առաջությամբ:

2. Նկատի ունի իր «Սիսուան և Լեոն Մեծագործ» պատմա-աշխարհագրական ուսումնասիրությունը, որը լույս տեսավ 1885 թ.:

3. Սիմոն Անտոնյան—Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, դրամագետ: Որոշ ժամանակ եղել է Մխիթարյան թանգարանի տնօրենը: Միաբանության հետ կապված ներքին հարցերով նա մի քանի անգամ մեկնել է Վենետիկ և, ինչպես պարզվում է նամակից, անձամբ ծանոթ է եղել Ալիշանին:

4. Նկատի ունի Ղևոնդ Հովնանյանին (տե՛ս № 1 նամակի 3-րդ ծանոթագրությունը):

5. Տե՛ս № 2 նամակի 4-րդ ծանոթագրությունը:

7

1. Գարեգին Զարհանյան (1827—1901)— Բանասեր-մատենագետ, թարգմանիչ, «Բազմավեպում» տպագրված բազում հոդվածներից զատ, ուշագրավ են նրա «Պատմություն մատենագրության հունաց, հռոմեացիներից և հարց եկեղեցվոց» (Վենետիկ, 1856), «Պատմություն հայերեն դպրությանց» (երկու հատոր, Վենետիկ, 1865 և 1878), «Պատմություն մատենագրության միջին և նոր գարուց յԱրևմուտս» (Վենետիկ, 1874, երկու հատոր), «Մատենադարան հայկական թարգմանությանց նախնյաց» (Վենետիկ, 1889) և այլ աշխատություններ:

2. Վարդան Ըստկարյանը Վիեննայի միաբանության արքայալի էր ընտրվել 1884 թ. հունիսի 12-ին, փոխարինելով 1883 թ. հոկտեմբերի 1-ին վախճանված Հակոբոս Պողոսյանին: Նույն թվականի նոյեմբերի 9-ին, Ըստկարյանն ստացել էր արքեպիսկոպոսության աստիճան, որը շնորհավորում է Ալիշանը:

3. Համազասպ Ավագյան—Վիեննայի Մխիթարյան միաբանության Պոլսի գործակալը:

4. Աբիխ Օտտո Հերման (1806—1886)— Գերմանացի երկրաբան-աշխարհագրագետ: Հայկական բնաշխարհի լավագույն ուսումնասիրողներից մեկը: Անձամբ շրջագայել է պատմական Հայաստանի գրեթե բոլոր գավառներում (մեծ մասամբ ին. Արոսյանի ուղեկցությամբ), որի արգասիքն է «Հայկական լեռնաշխարհի երկրաբանությունը» (Վիեննա, 1882—1887) գերմաներեն երկհատոր աշխատությունը: Ալիշանն ու Աբիխը երկարատև նամակագրական կապ են ունեցել:

5. Տե՛ս № 2 նամակի 4-րդ ծանոթագրությունը:

8

1. Սիմոն Անտոնյանի մասին տե՛ս № 6 նամակի 3-րդ ծանոթագրությունը:

2. Նկատի ունի Հակոբոս Պողոսյան արքայալի էր 1883 թ. հոկտեմբերի 1-ին, Վիեննայում:

3. Կղեմես Սիպիլյանի մասին տե՛ս № 2 նամակի 2-րդ ծանոթագրությունը:

4. Խոսքը Կիլիկյան Հայաստանի պատմական Տարսոն քաղաքից հյուսիս գտնվող Զանտրը Կալեսի (Եվրոպական արտասանությամբ՝ Պապեռոն կամ Պապառոն) բերդի մասին է, որին հանգամանորեն անդրադարձել է Ալիշանն իր «Սիսուան և Լեոն Մեծագործ» աշխատության մեջ (էջ 69—74): Կղեմես Սիպիլյանը 1875 թ. աշնանը եղել էր այդ վայրերում, մատիտանկարել բերդը և այն իր հետ բերել էր Վիեննա: Այդ նկարն էր խնդրում Ալիշանը, որը նա զետեղեց իր վերոհիշյալ աշխատության մեջ (էջ 70—71):

5. Համազասպ Ավագյանի մասին տե՛ս № 7 նամակի 3-րդ ծանոթագրությունը:

6. Նդիշե Գաֆթանյան (1828—1912)— Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ, բանասեր, թարգմանիչ: 1861 թ. մինչև մահը ապրել ու գործել է գերազանցապես Պոլսում, զանազան պաշտոններ վարելով տեղի Մխիթարյանների հայկական դպրոցում: Հայագիտական ռազմավիճակի հոգվածներով հանդես է եկել «Հանդէս ամսօրեայ»-ում: Ուշագրավ է նրա «Պատմություն հին և նոր կտակարանաց» ուսումնասիրությունը (Վիեննա, 1860):

5

1. Ղևոնդ Հովնանյանի մասին տե՛ս № 1 նամակի 3-րդ ծանոթագրությունը:

2. Կղեմես Սիպիլյանի մասին տե՛ս № 2 նամակի 2-րդ ծանոթագրությունը:

3. Ակնարկում է իր «Սիսուան և լեռն մեծագործ» աշխատությունը:

4. Տե՛ս № 2 նամակի 4-րդ ծանոթագրությունը:

10

1. Պապեռոն բերդի մասին տե՛ս № 8 նամակի 4-րդ ծանոթագրությունը:

2. Շարլ Դեսիս (Charles Texier) ֆրանսիացի ճարտարագետ-տեղագրող: 1836 թ. այցելել է պատմական Կիլիկիա և մասնագիտական քննության է ենթարկել տեղի հայկական հնությունները:

3. Ակնարկում է իր «Սիսուան և լեռն մեծագործ» աշխատությունը:

4. Կղեմես Սիպիլյանի մասին տե՛ս № 2 նամակի 2-րդ ծանոթագրությունը: Նամակում ակնարկվող երկու արձանների գծանկարները զետեղված են «Սիսուան և լեռն մեծագործ» աշխատության 73 և 75 էջերում:

5. Խոսքը Կիլիկիայի Այաս (նաև՝ Եգիաս) նավահանգստային քաղաքի մասին է, որը Ալիշանը տեղագրել է իր «Սիսուան և լեռն մեծագործ» աշխատության մեջ (էջ 357—397): Քաղաքի պատմա-աշխարհագրական բնութագիրը տալուց հետո, Ալիշանն անդրադարձել է Այասի մաքսատանը և խնամքով տվել է այն բոլոր լափերն ու կշիռները, որոնք տնօրինում էր Այասի մաքսատունը:

6. Շլումբերգեր Գուտտավ-Ադոլֆ (1844—1929)— Ֆրանսիացի պատմաբան, դրամագետ: Հիմնականում զբաղվել է Բյուզանդական կայսրության հին շրջանի պատմության ուսումնասիրությամբ և արժեքավոր դիտարկումներ ունի միջնադարյան շրջանի դրամագիտության վերաբերյալ: Նրա «Դրամագիտությունը լատինական արևելքում» (Փարիզ, 1878—1882), «Բյուզանդական կայսրության կնքագիտությունը» (Փարիզ, 1884) և, մասնավորապես, «Բյուզանդական էպոպեան 10-րդ դարի վերջում» (Փարիզ, 1896—1905, երեք մեծադիր հատոր) փաստական հարուստ նյութի առումով ուշագրավ են այսօր էլ:

7. Տե՛ս № 2 նամակի 4-րդ ծանոթագրությունը:

11

1. Հորը հավանաբար Ըստկարյանի հարազատներից էր, որովհետև Վիեննայի Մխիթարյանների թվում Հոր անունով միաբան չի եղել:

2. Ակնարկում է եղբորը, դրամագետ Սերովբե Ալիշանյանին (տե՛ս № 1 նամակի 2-րդ ծանոթագրությունը): Կիլիկիայի լեռն թագավորին պատկանող և նրան վերագրվող դրամների հանգամանալից քննությունն Ալիշանը կատարել է իր «Սիսուան և լեռն մեծագործ» աշխատության «Այաս» բաժնում և դրամք զլխում (էջ 367—388):

3. Տե՛ս № 2 նամակի 4-րդ ծանոթագրությունը: